11

ՀԵ 118, Էլմ. 284, Սաղմ. 9.9

1. Ով հոգվույս սիրող Քրիստոս,
Թող թռչիմ ես Քոյդ ի ծոց,
Երբ գոռան ջուրք հորդահոս
Եվ ամպեր մութ, հողմակոծ:
Բաց հզոր թևերդ, ա՛հ, բաց,
Չիք այլուր վայր ապահով,
Մինչ անցնի վախ ամպրոպաց,
Ա՛ռ, Փրկիչ, զիս ա՛ռ Քու քով:

2. Ես չունիմ այլ ապավեն,
Դու ես վեմս, ո՛հ, Տեր իմ,
Կատաղի ալեաց մեջեն
Դեպի վեր Քեզ կնայիմ:
Մի՛ թողուր զիս միայնակ,
Չիք դադար, այլ ո՞ւր դիմեմ,
Ա՛հ, կուրծքիդ վրա, հոն շիտակ,
Թույլ տուր գամ և շունչ առնեմ:

3. Դու արև ես, Դու՝ սեր իմ,
Տե՛ր, ամեն բան ես ինձ Դու,
Քեզմէ զատ ես ո՞վ ունիմ,
Դու բարիքս ես մնայուն:
Զիս՝ հոգնածս, գիրկդ առ, Տե՛ր,
Սիրտ տուր, ա՛հ, հեգ լքյալիս,
Զիս՝ ինկածս Դու առ վեր
Եվ դարման տուր խոցյալիս:

4. Ո՛վ Փրկիչ իմ, շնորհքիդ ծով
Թող մեղքիս լեռներն թաղե:
Պիղծ եմ ես ամբողջ անձով,
Սուրբ արյունդ իմ վրաս ցողե:
Դու ես ակ կենաց, ո՛վ Տեր,
Սիրտդ սիրո գետ կբխե,
Ա՛հ, ծարավ եմ, թող Քու սերդ
Հորդելով զիս ողողե: